

Մ աշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ
WWW.SOURPHAGOP.ORG (20-րդ տարի)

Այս թիւով.....

Կիրակնօրեայ Դպրոցի Ամանորի եւ
Սուրբ Ծննդեան Հանդէս Էջ 1,17, 18,19

Յունուար Ամսուան Բացատրական
Տօնացոյց Էջ 2-4

Ճրագալոյց Ս. Ծննդեան
Աստուածայայտնութիւն
Խթում

Տաղ Սուրբ Ծննդեան
Ջրօրհնէք
Ճրագալոյց

Ս. Ծննդեան Շարական
Խորհուրդ Մեծ

Յիսուսի Ծնունդը Էջ 5-6

Սբ. Վահան Գողթնացի Էջ 7

Եկո՛ւր Բեթլեհէմ երթանք Էջ 8

Պահուած Բառ Էջ 9

Բացատրութիւն՝ Հայց. Առաք. Սուրբ
Եկեղեցւոյ Պատարագին Էջ 10-12

Ո՛րն է Ճիշդ Պատասխանը Էջ 13-16

«Աստուածաշունչի Ներկայացում»
Կիրակնօրեայ Դպրոցի 40-ամեակին
առիթով Էջ 20

Յունուար 2020 (ԻԷ տարի թիւ 5)
Կիրակնօրեայ Դպրոցի Ամանորի եւ
Սուրբ Ծննդեան Հանդէս



Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր
Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցի Ամանորի
եւ Սուրբ Ծննդեան յայտագիրը տեղի ունեցաւ
Կիրակի, 22 Դեկտեմբեր 2019-ի ժամը 11:30-
ին, Ս. Յակոբ Վարժարանի «Բաստրմաճեան»
սրահին մէջ ի ներկայութեան ծնողներու,
բարեկամներու ինչպէս նաեւ Հոգեշնորհ Տէր
Հրանդ վարդապետ Թահանեանի (Վարիչ
Մեծի Տանն Կիլիկիոյ միջ-եկեղեցական
յարաբերութեանց բաժանմունքի
եւ Քահանայից պատրաստութեան
դասընթացքի):

Աշակերտներ եւ հանդիսատեսներ
յոտնկայս երգեցին Տէրունական աղօթքը:
Ապա աշակերտները դարձեալ յոտնկայս
աղօթեցին Ներսէս Շնորհալիի «Իմաստութիւն
Հօր Յիսուս»ը ու երգեցին Կիրակնօրեայի
քայլերգը (Դաշնակի ընկերակցութեամբ
Բասգալ Տեմիրճեանի): (շար. էջ 17)

Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ

Օրհնեալ է Յայտնութիւնն Քրիստոսի:

Ամսուան Համարը

«Եւ Բանը մարդ եղաւ եւ մեր մէջ բնակեցաւ, եւ մենք տեսանք անոր փառքը. փառքը
Միածինին, որ Հօրմէն եկաւ շնորհքով եւ ճշմարտութեամբ լեցուն»: *Յովհաննէս 1.14*

Հաւատք

Կրօն

Եկեղեցի

Լեզու

Մշակոյթ

Յունուար ամսուան բացատրական տօնացոյց

Դշ. 1	Ամանոր
Կիր. 5	ՃՐԱԳԱԼՈՅՑ Ս. ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ
Բշ. 6	ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՄԵՐ ՏԻՐՈՋ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
Գշ. 7	Յիշատակ Մեռելոց
Բշ. 13	ՏՕՆ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՄԵՐ ՏԻՐՈՋ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ
Գշ. 14	Տօն Ծննդեան Ս. Յովհաննու Կարապետին
Եշ. 23	Ս. Վահան Գողթնացի
Գշ. 28	Ս. Անդրէ Զօրավար

Պահքի Օրեր՝ 1, 2, 3, 4, 15, 17, 22, 24, 29, 31

Ճրագալոյց Ս. Ծննդեան կը կոչուի Աստուածայայտնութեան նախորդող երեկոյեան արարողութիւնը: Ճրագալոյցը բարդ բառ մըն է, «ճրագ լուցանել (վառել)», որովհետեւ եկեղեցւոյ մէջ երեկոյեան բազմաթիւ լապտերներ ու կանթեղներ կը վառին եւ պատարագ կը մատուցուի, որուն ընթացքին բոլոր հաւատացեալները վառող մումեր կը բռնեն: Ճրագալոյցի լապտերներու եւ մումերու լոյսը կը խորհրդանշէ այն հոգեւոր լոյսի ճառագայթումը մեր մէջ, որ մեզի պարգեւեց Փրկիչը իր տնօրինութիւններով:

Աստուածայայտնութիւն (Սուրբ Ծնունդ եւ Մկրտութիւն) Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի տնօրինութիւնները, որոնցմով Ան յայտնուեցաւ աշխարհին (Գաբրիէլ հրեշտակապետի աւետումը, Յիսուս Մանուկին ծնունդը, ութօրեայ թլփատութիւնը, հովիւներու եւ մոզերու երկրպագութիւնը, քառասնօրեայ ընծայումը, ինչպէս նաեւ Յորդանան գետին մէջ մկրտուիլը) առաջին դարերուն կը տօնուէին միեւնոյն, Աստուածայայտնութիւն կոչուող, մեծ տօնախմբական շրջանին:

Հետագային այս տօնի գրեթէ բոլոր յիշատակները առանձնացան՝ տարուայ մէջ բաժնուելով ըստ համապատասխան ամիսներու եւ օրերու: Մնացին միայն Ծնունդը եւ Մկրտութիւնը, որոնք ըստ Աւետարանին կատարուած են նոյն օրը՝ երբ Յիսուս 30 տարեկան էր: Ըստ ավանդութեան այդ օրը Յունուար 6-ն էր:

Աւելի ուշ, Ե. դարուն (451 թուին Քաղկեդոնի մէջ գումարուած չորրորդ Տիեզերական ժողովին՝ որուն Հայաստանեայց Եկեղեցին չմասնակցեցաւ) Յունա-Հռոմէական եկեղեցին, Ծննդեան տօնը եւս անջատեց Մկրտութենէն եւ սկսաւ տօնել Դեկտեմբեր 25-ին (մոռցնել տալու համար այդ օրերու արեւի պաշտամունքը Եւրոպայի մէջ) որ տարածում գտաւ ամբողջ աշխարհին մէջ: Սակայն Հայ Եկեղեցին հաւատարիմ լինելով հնագոյն ավանդութեան եւ մինչեւ՝ այսօր Քրիստոսի ծննդեան եւ մկրտութեան յիշատակը միացեալ կը տօնէ Յունուար 6-ին՝ Աստուածայայտնութիւն անուանումով:

Սուրբ Անդրէ Զօրավար համաքրիստոնէական սուրբ է, որ նահատակուեցաւ յանուն քրիստոնէական հաւատքի տարածման եւ ծաղկման: Ան Կիլիկիայէն էր եւ կ'ապրէր Դիոկղետիանոս կայսեր օրով: Որպէս բարձրաստիճան զինուորական՝ կը ծառայէր Սուրիոյ կայսերական բանակին մէջ՝ միաժամանակ ըլլալով գաղտնի քրիստոնէայ: Պարսիկներու դէմ պատերազմի ժամանակ, երբ իր սակաւաթիւ բանակը (մոտ 600 հոգի) հարկադրուած կը նահանջէր, քաջարի զօրավարը անոնց կը գօտեպնդէր Յիսուս Քրիստոսի անունով և վերադարձնելով բանակին մարտադաշտ՝ յաղթական դուրս կու գար պատերազմէն: Այս դէպքէն ազդուած, լման բանակը քրիստոնէայ կը դառնայ: Բանակի ընդհանուր սպարապետը, իմանալով այս մասին, զօրք կ'ուղարկէ եւ Տիրոսի կիրճին մէջ կը նահատակէ ամենքը:


ԽԹՈՒՄ

«Խթում» անուան տակ ծանօթ են Սուրբ Ծնունդը նախորդող երեկոյեան ընթացքին կատարուող նախատօնական եկեղեցական եւ ժողովրդական արարողութիւնները:

Այդ երեկոյ եկեղեցիէն ներս կանթեղներ կը վարուին եւ ճրագը կը բաժնուի ժողովուրդին՝ անոնց մոմերը վառելով ու այդպէս վառած մոմերը տուն տարուելով: Ճրագ վառելու այս սովորութեան հետեւողութեամբ՝ Խթումի երեկոյեան տրուած է նաեւ ճրագալոյց անունը:

Անցեալին իբր նախատօնակ ճրագալոյց կը կատարուէր Հայաստանեայց Եկեղեցոյ բոլոր մեծ տօներուն, իսկ ներկայիս միայն Սուրբ Ծնունդի եւ Զատիկուայ տօները նախորդող երեկոներուն:

Ճրագալոյցի ժողովրդական սովորութիւններէն են մէկը միւսին Քրիստոսի ծննդեան աւետիս տալ, ապա աւանդական ընթրիքի շուրջ հաւաքուիլ, ճաշակելու համար ձուկ, բանջար, հակիթ եւ գինի:




Մկրտութիւն
Յովսէփի Յովսէփեան

ՏաղՍուրբ Ծննդեան
 Այսօր տօն է սուրբ ծննդեան, աւետի՛ս,
 Տեառն մերոյ եւ յայտնութեան, աւետի՛ս:
 Այսօր Արեւն արդարութեան, աւետի՛ս,
 Երեւեցաւ ի մեզ մարդկան, աւետի՛ս:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ:

Այսօր սուրբ կոյսն անապական, աւետի՛ս,
 Ծնաւ երբք զանմահ Արքայն, աւետի՛ս:
 Այսօր հրեշտակք յերկնից իջեալ, աւետի՛ս,
 Ընդ մեզ օրհնեն զանմահ Արքայն, աւետի՛ս:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ:



Հովիւներուն
Երկրպագութիւնը

Գիտէի՞ր թէ....
 Յիսուս երեսուն (30) տարեկան էր երբ մկրտուեցաւ:
 Յիսուս ութ (8) օրուայ էր երբ անուանակոչուեցաւ, եւ
 մենք իր անուանակոչութիւնը կը տօնենք Յունուար 13-ին:

Ջրօրհնէջի արարողութիւնը հաստատուած է ի յիշատակ Քրիստոսի մկրտութեան: Անիկա կը կատարուի Աստուածայայտութեան փոսին: Քին ժամանակ զրօրհնէջը կը կատարուէր գետերու կամ լիճերու ափին, այժմ՝ եկեղեցոյ մէջ: Պատարագի աւարտին խաճանան յարուկ ընթերցուածներով, խարուկն եւ աղօթէն յետոյ խաչով կ'օրհնէ մեծ փակառի մէջ լեցուած զուրը, Ս. Միլոն կաթեցնելէ ետք անոր մէջ, եւ վայն կը բաժնէ հաւատացեալներուն՝ իբրեւ սրբութեան խորհրդանիշ եւ բժշկութեան միզոյ:



Ճրագալոյց Աբ. Ծննդեան Ծարական

Զանճառելի լուսոյ մայր
Եւ ըզնակարան անըսկզնակից Որդոյն,
Օրհնութեամբ մեծացուցանեմք:

Զանհաս տնօրէնութեան մայր
Եւ զանճնաւոր տաճար Աստուծոյ Բանին,
Օրհնութեամբ մեծացուցանեմք:

Ջրլորից փրկութեան մայր,
Որ զանտանելին յէից ի յարգանդի երարձ.
Ըզնա ամենեքեան
Օրհնութեամբ մեծացուցանեմք:

Խորհուրդ մեծ

Ո՞վ չի գիտեր Սուրբ Ծնունդի մասին գրուած ամենաճանօթ այս շարականը որ կը հնչէ ամէն տարի խթման գիշերը աւետելու համար Յիսուսի ծնունդը: Այս շարականին հեղինակն է Մովսէս Քերթոյ Հայրապետ եւ զայն գրած է 441 թուականին: Ահա այդ շարականին գրաբար բառերը եւ աշխարհաբար թարգմանութիւնը.

Խորհուրդ մեծ եւ սքանչելի
որ յայսմ աւուր յայտնեցաւ.
Հովիւք երգեն ընդ հրեշտակս,
տան աւետիս աշխարհի:

Ծնաւ նոր արքայ
ի Բեթղեհեմ քաղաքի.
Որդիք մարդկան օրհնեցէ ք,
զի վասն մեր մարմնացաւ:

Անբաւելին երկնի եւ երկրի
ի խանճարուրս պատեցաւ.
Ոչ մեկնելով ի չօրէ՛
ի սուրբ այրին բազմեցաւ:

* * *

Սքանչելի եւ մեծ խորհուրդ է,
որ այսօր յայտնուեցաւ.
Հովիւները հրեշտակներու հետ կ'երգեն,
աշխարհին աւետիս կու տան:

Ծնաւ նոր արքայ
Բեթղեհեմ քաղաքին մէջ.
Ով ժողովուրդ, մարդիկ, օրհնութիւն տուէր
որովհետեւ Ան մեզի համար մարմնացաւ:

Երկնքին եւ երկրին վրայ Անբաւելին
խանճարուրներու մէջ փաթթուեցաւ.
Առանց բաժնուած ըլլալու չօրմէն
սուրբ մտորին մէջ բազմեցաւ:

Յիսուսի Ծնունդը

(պարզացում)



Օր մը հրեշտակ մը այցելեց Մարիամ կոյսին եւ ըսաւ՝ «Ուրախացիր, Աստուած հետդ է, դուն օրհնուած ես կիներուն մէջ»:

Մարիամ, երբ լսեց այս խօսքերը, քիչ մը մտահոգուեցաւ, ինքզինքին հարց տուաւ թէ ի՞նչ ըսել կ'ուզէր հրեշտակը: Ապա, Գաբրիէլ հրեշտակը շարունակեց «Մի վախնար Մարիամ՝ դուն պիտի ունենաս զաւակ մը որուն անունը պիտի դնես Յիսուս, եւ ան Աստուծոյ Որդի պիտի կոչուի: Հրեշտակը ըսաւ նաեւ որ իր զարմիկը Եղիսաբէթն ալ

զաւակ մը պիտի ունենայ:

Մարիամ, երբ այս լսեց, անմիջապէս գնաց Եղիսաբէթին քով: Այս բոլորը պատահեցան երբ Մարիամ նշանուած էր Յովսէփին հետ:



Մինչ Յովսէփ կը մտածէր Մարիամի իրեն ըսածներուն մասին, Տիրոջ Հրեշտակը երազի մը մէջ երեւցաւ իրեն եւ ըսաւ.


- «Յովսէփ, մի վախնար ամուսնանալու

Մարիամի հետ: Մարիամ որդի մը պիտի ծնի եւ զայն Յիսուս կոչես որովհետեւ անիկա իր ժողովուրդը

իրենց մեղքերէն պիտի փրկէ:



Այդ օրերուն Հռոմի Օգոստոս կայսրը հրամայեց որ ամէն մարդ իր ծննդավայրը վերադառնայ ընդհանուր մարդահամար մը կատարելու համար: Յովսէփ եւ Մարիամ, Դաւիթ թագաւորի ծննդավայր Բեթլեհէմ քաղաքէն էին: Թէեւ զաւակը շուտով պիտի ծնէր, իրենք ստիպուած ճամբորդեցին Բեթլեհէմ: Բեթլեհէմ շատ մարդ կար եւ բոլոր պանդոկներուն սենեակները լեցուն էին, ուրեմն ստիպուեցան ախոռի մը մէջ քնանալ:



Յովսէփ եւ Մարիամ ստիպուեցան ախոռի մէջ քնանալ, որովհետեւ պանդոկներուն մէջ տեղ չկար: Այդ գիշեր իրենց գաւակը ծնաւ, զայն դրին մսուրին մէջ: Աւելի ուշ նոյն գիշերը հովիւներ եկան այցելութեան եւ պատմեցին «երբ մեր գառնուկներուն ու ոչխարներուն պահակութիւն կ'ընէինք, փայլուն հրեշտակ մը երեւցաւ մեզի եւ մենք շատ վախցանք: Բայց հրեշտակը ըսաւ մեզի


- Մի՛ վախնաք, ձեզի լաւ լուր մը պիտի տամ, Դաւիթ քաղաքին մէջ այսօր ծնաւ ձեր փրկիչը՝ Յիսուս Քրիստոս: Յետոյ, Հրեշտակին միացաւ խումբ մը ուրիշ հրեշտակներ եւ բոլորը միասին ըսին - Աստուծոյ փառք երկինքի մէջ եւ խաղաղութիւն աշխարհի վրայ»:




Այդ ժամանակ, արեւելքէն իմաստուն մոգեր երբ տեսան փայլուն աստղը երկնքին մէջ, անմիջապէս գիտցան որ ժողովուրդին համար նոր թագաւոր մը ծներ էր:

Անոնք հետեւելով աստղին հասան Բեթլեհէմ, գտան մսուրը ուր Յիսուս մանուկը ծներ էր ու անոր նուիրեցին ոսկի, կնդրուկ եւ զմուռ:

Թէեւ Հերովդէս թագաւորը հրամայած էր մոգերուն որ վերադառնան եւ իրեն պատմեն իրենց տեսածը, բայց Աստուած երազի մը



մէջ հրահանգեց մոգերուն որ ուրիշ ճամբով երթան իրենց երկիրը, առանց Հերովդէսին հանդիպելու, եւ այդպէս ըրին:



Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ Չեզի եւ Մեզի Մեծ Աւետիս

Յիշատակութիւն՝ Սուրբ Վահան Գողթնացիի

Արաբական տիրապետութեան շրջանին, բազմաթիւ հայ իշխաններ ու անոնց զաւակները գերի տարուեցան Դամասկոս հոն կրթուելու համար իսլամական հաւատքի մէջ եւ արաբ դառնալու համար: Տարագրուող մանուկներու կարգին կը գտնուէր Գողթնի Խոսրով իշխանի որդին չորս (4) տարեկան Վահանը: Արաբները անոր անունը փոխելով զայն կոչեցին Վահապ:

Վահան, իր ուշիմութեան շնորհիւ արժանացաւ յատուկ խնամքի ու դարձաւ Օմար ամիրապետին նախասիրած արքունի պաշտօնեան:

Յովհան Օձնեցի կաթողիկոս Դամասկոս իր այցելութեան ընթացքին արտօնութիւն խնդրեց Օմար ամիրապետէն որ հայ տարագիր իշխանները վերադառնան հայրենիք ու յաջողեցաւ այդպիսի արտօնութիւն ձեռք ձգել: Վահան, որ թէեւ իսլամ կրօնքին մէջ մեծցած էր, իմացած էր թէ ինք Հայ իշխանի մը որդին էր: Հետեւաբար, ինք եւս փափաքեցաւ վերադառնալ Հայաստան, խոստանալով ամիրապետին վերադառնալ Դամասկոս իր հօրենական կալուածները ժառանգելէ ու հայրենի հողը տեսնելէ անմիջապէս ետք:

Վահան իր հայրենի գաւառը հասնելէ ետք տեղեկացաւ Օմար ամիրապետին մահուան մասին ու որոշեց փախ Հայաստան ու վերագտնել իր քրիստոնէայ հաւատքը:

Վահանի քրիստոնէայ դառնալու լուրը երբ Դամասկոս հասաւ, օրուան ամիրապետը որոշեց ձերբակալել զայն ու դատել: Այսպիսով սկիզբ առաւ հալածանքի երկար շրջան մը երբ Վահան թափառելով Հայաստանի զանազան կողմերը, ժամանակաւոր կերպով կ'ապաստանէր զանազան շրջաններու վանքերէն ներս, ապա կը ստիպուէր տեղափոխուիլ չվտանգելու համար տեղի

վանականներն ու բնակիչները: Այս թափառական վիճակի վերջին հանգրուանը կը հանդիսանայ Սիփան լերան ստորոտը գտնուող Երաշխաւորաց վանքը, որուն մեծաւոր Հայր Արտաւազըր պատսպարեց ու քաջալերեց զինք:

Գիտնալով հանդերձ թէ իսլամութենէն հրաժարող անձը մահուամբ կը պատժուէր, Վահան որոշեց ներկայանալ Հեղամ ամիրապետին, յայտնել անոր իր քրիստոնէայ ծագումը ու քրիստոնէայ հաւատքին հաւատարիմ փախու փափաքը: Ամիրապետին մեծ խոստումները ապարդիւն մնացին ու վահան մերժեց որեւէ ձեռով հրաժարիլ իր քրիստոնէայ հաւատքէն:

Վահան Գողթնացիի նահատակութիւնը այլ օրինակ մըն է հերոսական կեցուածքի մը, ըստ որուն քրիստոնէայ հաւատացեալներ հաստատուն փասցած են իրենց հաւատքին հանդէպ ու մերժած ուրանալ զայն:

Անոնց յիշատակը վառ կը փայ միայն երբ իրենց նահատակութիւնը արժեւորենք մենք եւս կառչած մնալով մեր հաւատքին ու ապրելով որպէս Քրիստոսի սիրով ու հաւատքով շնորհուած հաւատացեալներ:


Գողթն գաւառը կը գտնուի Նախիջեւանի մէջ որ ներկայիս Ատրպէյճանի տիրապետութեան տակ է: Անոր քաղաքներէն են Տիգրանաւան եւ Ագուլիս:

Եկո՛ւր Քէթլեհէ՛մ երթանք (Յիսուսի Ծնունդը Ղուկաս 2.1-21)



Եկո՛ւր Քէթլեհէ՛մ երթանք եւ տեսնենք պարահաճը, այն ինչ որ Մէջըր մեզի յայտնեց:

Օգնէ՛ հովիւներուն որ գտնեն Յիսուս մանուկը:



Մուտն սը: Մէզէն կրնանք անցնիլ եւ յառազանալ:



Սխալ մանուկ սը: Ետ դարձէ՛ք:



Մէկը որ ճեպի խամբան ցոյց կու տայ՝ Յառազայցէ՛ք:



Պահուած բառ

ւ	ա	բ	գ	ա	բ	տ	է	ւ	ի	ս	ն
ա	ա	ռ	է	ն	ա	է	ի	բ	ւ	ի	ք
բ	ա	ն	ա	ն	բ	ն	ա	կ	բ	բ	ի
ա	ն	թ	ա	ռ	ա	ւ	ւ	ա	բ	ա	լ
թ	ռ	բ	ռ	ս	ւ	ւ	ի	ս	ա	ք	ա
ռ	բ	ա	կ	տ	է	ն	տ	ի	ն	ւ	ս
լ	ա	ա	ի	ա	ի	ա	ն	ա	ա	ն	ի
կ	յ	փ	բ	ս	բ	ք	ռ	լ	հ	ի	բ
ն	բ	ւ	լ	լ	ռ	լ	ւ	ռ	ի	թ	ա
ա	է	ռ	ռ	պ	է	տ	ի	կ	տ	է	ն
ն	լ	ւ	հ	ռ	ի	փ	ս	ի	ւ	է	լ

Արտեմիս
Անթառամ
Արամէ
Արփի
Անահիտ
Արմէն
Առէն
Անի
Ալիք


Արին
Էտկար
Թորոս
Լուսին
Կասիա
Հռիփսիմէ

Մանասէ
Մարգար
Միսաք
Մարաթուկ
Մինաս
Մարի
Մուրատ
Մարալ

Նանար
Նորայր
Պետիկ
Ռիթա
Սրբուհի
Սիրաք

Բացատրություն՝ Հայց. Առք. Սուրբ Եկեղեցւոյ Պատարագին «շար. 3»

Կը շարունակենք ներկայացնել Բերիոյ թեմի տարիներու Բարեջան Առաջնորդ, եւ մեր Ս. Յակոբ Եկեղեցւոյ այժմու Հոգեւոր Տեսուչ Գերշ. Ս. Սուրեն Ս. Արք. Գաթարոյեանի «Բացատրություն Ս. Պատարագ»-ի բաժինը 1998ի Հալէպի մէջ հրատարակուած Ս. Պատարագ Հայց. Առք. Եկեղեցւոյ գրքոյկը:



Ս. Պատարագի արարողութեան 4 մասերը:

Ինչպէս անցեալ անգամ նշեցինք, Հայաստանեայց Եկեղեցւոյ Ս. Պատարագի արարողութիւնը 4 մասերէ կը բաղկանայ:

1. Պատրաստութիւն
2. Ճաշու Պաշտօն
3. Բուն Պատարագ
4. Արձակում

Երախայ = չմկրտուած

Անցեալ թիւով ներկայացուցինք «Պատրաստութիւն»ը, իսկ այս թիւով պիտի ներկայացնենք «Ճաշու Պաշտօն»ը:

2. ՃԱՇՈՒ ՊԱՇՏՕՆ

Պատրաստութենէն ետք եկող «Ճաշու Պաշտօն»ը, Պատարագի առաջին մասն է, որ կը կոչուի նաեւ ԵՐԱԽԱՅԻՑ ՊԱՏԱՐԱԳ: Անցեալին, անոնք որոնք չէին մկրտուած, ու ապաշխարանքի մէջ գտնուողները, կրնային ներկայ ըլլալ միայն Պատարագի այս բաժնին: ՃԱՇՈՒ ՊԱՏԱՐԱԳը նախապատրաստութիւնն է ԲՈՒՆ ՊԱՏԱՐԱԳին: Այս բաժնին մէջ է որ հաւատացեալները հոգեպէս կը պատրաստուին մասնակից դառնալու զոհաբերման սուրբ խորհուրդին:

Թափօրի Շարական

ՃԱՇՈՒ ՊԱՇՏՕՆը կը սկսի Թափօրի շարականով:

Թափօրի խնկարկութեան ատեն, խաչակնքելով, պատարագիչին ըսել:

- Յիշեսցիր եւ զմեզ առաջի անմահ Գառինն Աստուծոյ:

Պատարագիչը կը պատասխանէ.

- Յիշեալ լիջիք առաջի անմահ Գառինն Աստուծոյ:



Ժամամուտ եւ Ճաշու Շարական

Թափօրի Շարականին երգեցողութենէն ետք, դպիրները կ'արտասանեն յաւուր պատշաճի (յաւուր կը նշանակէ օր, այսինքն այդ օրուան յարմար) Ժամամուտը եւ կ'երգեն Ճաշու Շարականը: Ժամամուտը եւ Ճաշու Շարականը ներբողականներ են ուղուած օրուայ Տէրունի տօնին, կամ ոգեկոչուող սուրբին:

Երեքսրբեան Փառաբանանք

Ճաշու շարականին կը յաջորդէ Երեքսրբեան փառաբանանքը՝ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾը:

Լուր (այսինքն ոչ տօնական) օրերու եւ Խաչի տօներուն կ'երգենք.

Սուրբ Աստուած, սուրբ եւ հօգօր, սուրբ եւ անմահ,
որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ:

սակայն, երկրորդ տողը կը փոխուի տարբեր տօներու առիթներով, հետեւեալ ձեւով.

- Աւետման եւ Ծննդեան՝ որ յայտնեցար վասն մեր, ողորմեա մեզ:
- Տեառնընդառաջին եւ Ծաղկազարդին՝ որ երկիր եւ գալոց ես, ողորմեա մեզ:
- Սուրբ Զատիկին- Յարութեան տօնին՝ որ յարեար ի մեռելոց, ողորմեա մեզ:
- Հոգեգալուստին՝ որ եկիր եւ հանգեար յԱռաքեալսն, ողորմեա մեզ:
- Պայծառակերպութեան/Վարդավառին՝որ յայտնեցար ի Թաքոր լերինն, ողորմեա մեզ:
- Վերափոխման Աստուածածնի՝ որ եկիր ի փոխումս մօր քո եւ կուսի, ողորմեա մեզ:

Ճաշու Աւետարան

Աստուածային փառքն է, որ կը ճառագայթէ եւ կ'ողողէ ողջ եկեղեցին: Սուրբ, հօգօր եւ անմահ Աստուածորդին է որ մեզի համար մարմնացաւ, խաչուեցաւ եւ յարութիւն առաւ: Աստուծոյ Որդիին սրբութեամբ օծուած սրտերը այս անգամ կը բացուին ըմբռնելու յաւիտենական այն ճշմարտութիւնները, որոնք մեզի կը ներկայանան ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶԻ լոյս էջերէն: Մարգարէներ կը վկայեն, Պօղոս Առաքեալ կը պատգամէ, եւ ՃԱՇՈՒ ԱԻԵՏԱՐԱՆով Քրիստոս Ինքն է որ կը խօսի Աւետարանիչներու գրիչով:

Հաւատամք

Ժամանակը հասած է որ հաւատացեալները խոստովանին իրենց ուղղափառ դաւանութիւնը՝ ուրեմս միասնաբար կ'ըսեն Նիկիական Հաւատամքը:

ՆԻԿԻԱԿԱՆ ՀԱՆԳԱՆԱԿը բանաձեւումս է Տիեզերական Ա. ժողովին, որ տեղի ունեցաւ ՆԻԿԻՈՅ քաղաքին մէջ 325թ. եւ որուն մասնակցած են 318 Հայրապետներ: Հայաստանեայց Եկեղեցոյ կողմէ այս ժողովին մասնակցած է ԱՐԻՍՏԱԿԷՍ ՀԱՅՐԱՊԵՏ, Ս. Գրիգոր Լուսաւորիչի որդին:

Նգովք

Ժողովուրդին կողմէ արտասանուած «Հաւատամք»էն ետք, Սարկաւազը Հայաստանեայց Եկեղեցւոյ դիրքորոշումը կը բանաձեւէ որպէս նգովք բոլոր անոնց հանդէպ որոնք կ'ըսեն թէ «կար ժամանակ երբ չկար Որդին», կամ «կար ժամանակ երբ չկար Սուրբ Հոգին» կամ «ոչինչէն ստեղծուեցան կամ ուրիշ էութենէ մը գոյացան» կամ «փոփոխութեան եւ այլալլումի ենթակայ են»:

Ասկէ ետք, պատարագիչ քահանան կը կրկնէ Ս. Գրիգոր Լուսաւորիչի խօսքերը արտասանուած 325-ին երբ իր որդին Արիստակէսը, Հայաստան աշխարհ բերաւ Նիկիոյ Ժողովին որոշումները ըսելով՝

«Իսկ մենք փառաւորենք զԱյն (Քրիստոսը), որ յաւիտեաններէն առաջ է, երկրպագելով Սուրբ Երրորդութեան՝ որ մէկ Աստուած է. Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Հասած է ժամը Աստուածորդւոյն փառաւորման: Ուրե՛մս անոնք որոնք պատրաստ չեն հաղորդակից դառնալու Աստուածային այս խորհուրդին, պարտին դուրս ելլել եկեղեցիէն. որովհետեւ «այրող կրակ է ան, որ կ'այրէ եւ կը սպառէ մեղաւորները», ինչպէս պիտի ըսէր Բարսեղ Կեսարացի Հայրապետ: Ահա թէ ինչո՞ւ Սարկաւազը խորանէն բարձրաձայն կը յայտարարէ:

«Ո՛չ մէկ երախայ (չմկրտուած), ո՛չ մէկ թերահաւատ, ո՛չ մէկ ապաշխարութեան մէջ գտնուող եւ ոչ մէկ հոգիով ինքզինք մեղաւոր զգացող թող մօտենայ աստուածային խորհուրդին:

Հաւատացեալները պատրաստ են ԲՈՒՆ ՊԱՏԱՐԱԳԻՆ (յաջորդիւ):

+++++



Աւետում

Ո՞րն է ճիշդ պատասխանը Մանկապարտեզի անկիւն



Ամբողջացուր ըստ Մարթէոսի Աւետարանին 2. 9-12

Քրահանգը, աստղը, առազնորդեց, երկրպագեցին, ոսկի, կնդրուկ, ՎՄՈՒՍ, երապի

Թագաւորին այս ----- լսելէ ետք, մոգերը մեկնեցան: Անոնք
 չափազանց ուրախացան, երբ կրկին տեսան այն -----, որ արեւելքի
 մէջ տեսեր էին. եւ ահա աստղը ----- վիրենք մինչեւ որ եկաւ
 ու կեցաւ այն վայրին վրայ ուր երեխան կը գտնուէր: Երբ տուն մտան,
 տեսան երեխան իր մօրը՝ Մարիամին հետ, եւ մինչեւ գետին խոնարհելով
 ----- մանուկին: Ապա բացին իրենց արկղերը եւ շիտուսի
 ընծայեցին իրենց նուէրները՝ -----, ----- եւ
 -----:

Յետոյ ուրիշ եամբով գացին իրենց երկիրը, առանց Քերովդէսի
 Բանդիպելու, ինչպէս որ Աստուած ----- մը մէջ Քրահանգեց
 իրենց:

Պրն է Եիշդ պատասխանը

Նախակրթարան Ա., Բ. Ե. Գ. դասարաններու անկիւն

- 1.- Պրն ւ փոնը այս փարի կը փոնենք
 Յունուար 23-ին:
 ա. Ա. Յովհաննէս Ոսկեբերան
 Քայրապետին
 բ. Ա. Աբգար թագաւորին
 գ. Ա. Վահան Գողթնացիին
 դ. Յովնան մարգարէին
- 2.- Այս փարի էրբ կը փոնենք
 Յովհաննէս Սկրպիչին փոնը:
 ա. Յունուար 6-ին
 բ. Յունուար 15-ին
 գ. Յունուար 14-ին
 դ. Յունուար 27-ին
- 3.- Այս փարի էրբ կը փոնենք Յիսուսի
 Ճննդեան փոնը:
 ա. Յունուար 6-ին
 բ. Յունուար 18-ին
 գ. Յունուար 20-ին
 դ. Յունուար 27-ին
- 4.- 2022-ին էրբ փեղի պիպի ունենայ
 Ջրօրհնէքը:
 ա. Յունուար 6-ի Ա. Պատարագէն երբ:
 բ. Յունուար 5-ի երեկոյեան
 գ. Ջափիկին
 դ. Բարեկենդանին
- 5.- 1899-ին էրբ փոնեցինք Յիսուսի
 մկրտութեան փոնը:
 ա. Յունուար 6-ին
 բ. Յունուար 18-ին
 գ. Պեկտեմբեր 25-ին
 դ. Յունուար 27-ին
- 6.- Այս փարի էրբ կը փոնենք Յիսուսի
 Աստուածայայտնութիւնը:
 ա. Յունուար 6-ին
 բ. Պեկտեմբեր 18-ին
 գ. Յունուար 25-ին
 դ. Յունուար 27-ին
- 7.- Յիսուս ինչով մկրտուեցաւ:
 ա. Ջէթով
 բ. Ջուրով
 գ. Միւռոնով
 դ. Դուրով
- 8.- Յիսուս որով կողմէ մկրտուեցաւ:
 ա. Սէր Գառնիկին
 բ. Արբաւանին
 գ. Յովհաննէս Սկրպիչին
 դ. Քահանայապետին
- 9.- Ինչ կը կոչենք Ա. Ծնունդին
 նախորդող երեկոն:
 ա. Դսթուս
 բ. Ջափիկ
 գ. Ջրօրհնէք
 դ. Բարեկենդան
- 10.- Երբ փեղի կ'ունենայ Ճրագալոյցը:
 ա. Յունուար 6-ի Ա. Պատարագէն երբ:
 բ. Յունուար 5-ի երեկոյեան
 գ. Ջափիկին
 դ. Բարեկենդանին

Պրն է եիշդ պափասխանը

Նախակրթարան Պ., Ե. և Զ. դասարաններու անկիւն

1.- Յիսուսի անուանակոչութիւնը անշարժ փօն մըն է: Ամէն փարի երբ կը փօնենք Յիսուսի անուանակոչութիւնը:
Յունուար --- ին:

2.- Մոգերը ինչ նուիրեցին Յիսուս Մանուկին:
ա. ---ի
բ. -----կ
գ. ւ-----

3.- Պ՛վ էր Քրէաստանի թագաւորը երբ Յիսուս ծնաւ:
-----ս

4.- ա. Պ՛վ էր Քոռոմի կայսրը երբ Յիսուս ծնաւ:
բ. Մարուան խանիերորդ ամիսը այս կայսրին անունով է:
ա. -----
բ. --

5.- Քինգ Մաղաւարներէն ո՞ր մէկը անշարժ փօն մըն է:
ա. Ա. Ծնունդ
բ. Ա. Զարիկ
գ. Պայծառակերպութիւն
դ. Վերափոխումն Ա. Աստուածածնի
ե. Խաչվերայ

6.- Յիսուսի մկրտութեան ընթացքին, Ա. Քոզին ինչի կերպարանջով իզաւ Յիսուսի վրայ:
-----ի

7.- Ամբողջացո՞ւր ըստ Մարկոսի Աւետարանի 1.11-ին

Երկինքէն ձայն մը լսուեցաւ, որ կ'ըսէր.
- Պուն Ես -- ս----- Պ-----, որուն
-----:

8.- Ա. Ծնունդի խթման մատուցուող Ա. Պափարագի ընթացքին երբ «Սուրբ Աստուած, Սուրբ Եւ Քլօր, Սուրբ Եւ անմահ ողորմեա մեզ» կ'երգենք, ինչ կ'ըսենք երկրորդ փողին:
ա. որ խաչեցար վասն մեր
բ. որ յայտնեցար վասն մեր
գ. որ եկիր Եւ գալոց Ես
դ. որ յարեար ի մեռելոց

9.- Ինչ է այս փարի Յունուար 30-ին յիշատակուող Սուրբին անունը:
ա. Յովհաննէս
բ. Կարապետ
գ. Անդրէ
դ. Մարտիրոս

10.- Յիսուսի ծննդեան Քովիւներու այցին մասին միայն մէկ աւետարանի մէջ կը կարդանք: Պր աւետարանին մէջ:
ա. Մարթէոս
բ. Մարկոս
գ. Պուկաս
դ. Յովհաննէս

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Երկրորդականի անկիւն

1.- Անոնք որոնք Ս. Ծնունդը կը տօնեն
Դեկտեմբեր 25-ին, ե՞րբ կը տօնեն
մկրտութիւնը:
ա. Յունուար 6-ին
բ. Յունուար 1-ին
գ. Յունուար 13-ին
դ. Դեկտեմբեր 25-ին

2.- Արեւմտեան Եւրոպայի քրիստոնէաները
ե՞րբ փոխեցին Ս. Ծննդեան տօնը Յունուար
6-էն Դեկտեմբեր 25-ին:
ա. 325 Նիկիոյ ժողովին
բ. 451 Քաղկեդոնի ժողովին
գ. 381 Կոստանդնուպոլսոյ ժողովին
դ. 431 Եփեսոսի ժողովին

3.- Հայաստանեայց Եկեղեցին այս տարի
ո՞ր սուրբին տօնը կը յիշատակէ Յունուար
30-ին:

Ս. -----

4.- Գրէ՛ ճշգրիտ ժամանակագրական
շարքով հետեւեալ տօները.
Աստուածայայտնութիւն,
Անուանակոչութիւն, Յովհաննու
Կարապետ, Ս. Սարգիս, Ղեւոնդեանց,
Վարդանանց, Բուն Բարեկենդան:
ա.
բ.
գ.
դ.
ե.
զ.
է.

5.- Գրէ՛ ճշգրիտ ժամանակագրական
շարքով հինգ տաղաւարները:
ա.
բ.
գ.
դ.
է.

6.- Ամբողջացո՛ւր:
Խորհուրդ — եւ սքանչելի
որ յայսմ ատուր -----.
----- երգեն ընդ հրեշտակս
տան ----- աշխարհի

7.- Ամբողջացո՛ւր:
----- նոր արքայ
Ի ----- քաղաքի.
Որդիք մարդկան -----
զի վասն մեր -----:
----- երկնի եւ երկրի
ի ----- պատեցաւ.
Ոչ ----- ի Հօրէ
ի սուրբ ----- բազմեցաւ:

8.- Ամբողջացո՛ւր. երախայի մը
մկրտութեան ընթացքին կնքահայրը կը
պատասխանէ.
«-----, -----, ----- եւ
-----: Մկրտուիլ եւ արդարանալ,
----- մեղքերէ, ազատուիլ չար -----
եւ ----- Աստուծոյ:

9.- Ամբողջացո՛ւր.
Մկրտուող կը դառնայ
Աստուծոյ ----- եւ
Եկեղեցոյ ----- :

10.- Հայկական ՌՆԿԻ տարին ո՞ր
տարուան կը համապատասխանէ:

2---

(շար. էջ 1-էն) Ապա խօսք առաւ Տնօրէնը՝ Թորոս Պապիկեան որ անդրադարձաւ Դեկտեմբեր ամսուան մէջ Մանուկ Յիսուսի բացակայութեան երբ Christmas-ի տիրական դէմքը Կաղանդ Պապան էր: Բացատրելէ ետք պատմական պատճառները որոնք 5-րդ դարուն Եւրոպայի եպիսկոպոսներուն ստիպեցին տեղափոխել Ս. Ծննդեան օրը Յունուար 6-էն Դեկտեմբեր 25-ի, ան հաստատեց թէ Կիրակնօրեան, կը ձգտի իր աշակերտներուն մէջ Հայ Քրիստոնէայ նկարագիր կերտել, հիմնուած Քրիստոսի վրայ, եւ առ այդ Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտը քաջատեղեակ պահելու համար Քրիստոսի Ծնունդին, ամէն տարի կը պատրաստէ Սուրբ Ծննդեան կենդանի պատկերը, ուր երկրորդականի աշակերտները կը կարդան Մատթէոսի եւ Ղուկասի աւետարաններէն հատուածներ եւ մանկապարտեզի ու նախակրթարանի աշակերտները կը ներկայացնեն հովիւներ,



մոզեր, հրեշտակներ, Մարիամ, Յովսէփ, Օրէնքի ուսուցիչներ ու Հերովդէս թագաւորը:

Ապա սկսաւ կենդանի պատկերը: Ընթերցողներ Երկրորդականի աշակերտներ՝ Հրակ Պանքեան, Ալեքս Տեմիրճեան, Սարին Խշխշեան, Յարութ Թաշճեան, Յարութ Զուլճեան եւ Միեր Ստեփանեան (ուսուցիչներ՝ Յասմիկ Նաճարեան, Առէն Պապիկեան եւ Միեր Պանքեան) փոխն ի փոխ կարդացին Աւետարաններէն, մինչ ժամացեալ աշակերտները կենդանի պատկեր մը ներկայացուցին ըստ կարդացուածին: Բեմը կը ներկայացնէր վրան մը, որ գործածուեցաւ թէ՛ որպէս Յովսէփի եւ Մարիամի Նազարէթի տունը եւ թէ՛ այն քարայրը ուր Յիսուս ծնաւ (բեմի



պատասխանատու՝ Սդեֆան Տեմիրճեան): Ճոխ էր տարագներու հաւաքածոն (բեմի զարդարանք եւ տարագներու պատասխանատուներ՝ Յասմիկ Նաճարեան եւ Շողիկ Նաճարեան): Իւրաքանչիւր աշակերտ առիթը ունեցաւ բեմ ներկայանալու, եւ կարդացուածին բոլոր մանրամասնութիւնները ներկայացուեցան: Հետաքրքրական էր փոքրիկ հովիւներուն ներկայութիւնը իրենց ոչխարներով եւ Հրեշտակներու «երկնաւոր զօրքերու բազմութիւն»ը:

Կենդանի պատկերի աւարտին ժամանեց Կաղանդ Պապուկը որուն ներկայութեան

Մանկապարտեզի աշակերտները արտասանեցին «Ո՛վ Մեծ Աստուած» աղօթքը (ուսուցչուհի Շողիկ Թեհինեան):



Նախակրթարանի Ա. և Բ. դասարաններու աշակերտները արտասանեցին «Եւ այն տեղը Հովիւներ կային...» աւետարանական հատուածը, եւ «Ո՛վ Մեծ Աստուած» աղօթքը եւ երգեցին, «Լուռ Գիշեր» եւ «Ծափ զարկ աշխարհ» երգերը (ուսուցչուհի Թային Բարսեղեան): Որմէ ետք Նախակրթարան Գ. և Դ. դասարաններու աշակերտները արտասանեցին Սաղմոս ՃԺԶ (117) (ուսուցչուհի Թամար Գիզիրեան):

Ապա Երկրորդականի Ա. դասարանի աշակերտները ներկայացուցին Ժագ Յակոբեանի «Ժամադրութիւն» քերթուածը (ուսուցիչներ Յասմիկ Նաճարեան եւ Առէն Պապիկեան):



Յայտագրի վերջաւորութեան Կիրակնօրեայ դպրոցի Երկրորդականի աշակերտները

երգեցին «Այսօր Տօն է Սուրբ Ծննդեան» եւ «Զանճառելի Լուսոյ Մայր» շարականները, որմէ ետք Նախակրթարանի Գ., Դ., Ե. և Զ. դասարանի աշակերտները միացան իրենց եւ միասնաբար երգեցին «Խորհուրդ Մեծ»





շարականը և «Սուրբ Ծնունդ» երգը, որմէ ետք որմէ ետք Մանկապարտեզի և Նախ. Ա. և Բ. դասարաններու աշակերտները միացան երգչախումբին և երգեր երգեցին Կաղանդ պապային: Երգերը ղեկավարեց Սեւակ Պապիկեան, դաշնակի ընկերակցութեամբ Բասգալ Տեմիրճեանի: Յայտագրիը ասարտեցաւ Հոգշ. հայր սուրբին սրտի խօսքով ուղուած աշակերտներուն ու ծնողներուն: Ան անդարդարձաւ նաեւ իր Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ դպրոցի աշակերտած տարիներուն:



Յայտագրի ասարտին ներկաները հիւրասիրուեցան խմորեղէնով (պատրաստուած ծնողներու կողմէ), սուրճով և պտուղի հիւթով: Հաւաքոյթը ասարտեցաւ ներկաներու նոր տարուայ բարեմաղթութիւններու փոխանակումով:



«Աստուածաշունչի ներկայացում» Կիրակնօրեայ Դպրոցի 40-ամեակին առիթով



Կիրակնօրեայ դպրոցի 40-ամեակին առիթով, Մուրբ Յակոբի տունին օրը՝ Շաբաթ 14 Դեկտեմբեր 2019 երեկոյեան ժամը 6:00-ին, յետ արարողութեան, տեղի ունեցաւ «Աստուածաշունչի ներկայացում» Դպրոցի տնօրէն Բրշ. Թորոս Սրկ. Պապիկեանի կողմէ:

Ներկայացումը կը բաղկանար 54 նկարազարդ PowerPoint slide-ներէ որոնց ընդմեջէն մանրամասնօրէն ներկայացուեցաւ Աստուածաշունչի պատմականը, պատգամը, ինչպէս նաեւ Հին եւ Նոր կտակարաններու, եւ երկրորդական գիրքերու բովանդակութիւնը: Ներկայացումէն ետք իւրաքանչիւր մասնակիցի տրուեցաւ Աստուածաշունչ մը նուիրատուութեամբ բարերար Մանուկ Չուխաճեանի: